Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ «Մարտունու Տիգրան Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա Համագործակցային ուսումնական մեթոդներով մոտիվացիայի բարձրացումը որպես կրթական կարիք

Անցկացման վայր՝ Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Նարինե Մնացականյան

Դպրոց՝ Մադինայի միջնակարգ դպրոց

Մարտունի 2022

Բովանդակություն

Ներածություն----------2
գրական ակնարկ---------- --------4
Փորձարարական հետազոտություն----------10
Խմբի նկարագիրը----------10
Փորձարարական դաս-1----------10
Փորձարարական դաս-2---------- 11
Վերլուծություն-անդրադարձ----------12
Եզրակացություն----------13

Գրականության ցանկ—----------13
Հավելված—----------14
Հայտորոշիչ թեստ-1—----------14
Հայտորոշիչ թեստ-2—----------15
Համագործակցային դասի պլան-1—----------16
Համագործակցային դասի պլան-2—----------18
Դասի պլան-1—----------19
Դասի պլան-2—----------21
Ինքնաանրադարձի թերթիկ-1—----------22
Ինքնաանրադարձի թերթիկ-2—----------23

Ներածություն

Տվեք երեխային հետաքրքրասիրություն:Գիտելիքը նա կգտնի ինքը

Անատոլի Գին

Դրդապատճառ/մոտիվացիա-շարժառիթ,ներքին և արտաքին գործոններ,որոնք դրդում են մարդկանց իրականացնել գործողություններ,որպեսզի հասնեն նպատակին:
Կան մոտիվացման բազմաթիվ տեսություններ:Այս մոտեցումները կենտրոնանում են մարդկային պահանջների վրա,ինչը ձևավորում է նրանց վարքագիծը:
Ուսումնական մոտիվացիաների խթանումով էլ պայմանավորված է երեխայի ուսումնականգործունեությունը,ուսումնառության արդյունավետությունը, նյութի ընկալումը

Ուսումնական դրդապատճառները/մոտիվացիա լինում են

- արտաքին
- ներքին

Արտաքին դրդապատճառները ծնվում են երեխայի և նրան շրջապատողի կարիքներից:Դրանք արդյունավետ են,բայց սովորողների կողմից դժվարությամբ են ընկալվում:Եթե հաշվի առնենք սովորողի կրթական կարիքները,ցանկությունները,ապա առավել արդյունավետ են ներքին մոտիվացիաները:
Կրտսեր դպրոցականների ուսումնական դրդապատճառները կարող են լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական:

Դրական դրդապատճառներից են՝

- գիտելիքների նկատմամբ կայուն ձգտումը,
- բարձր գնահատական ստանալու ցանկությունը,
- ուսուցչի և ծնողների կողմից խրախուսանքի արժանանալու ցանկությունը,
- դասընկերների մեջ հեղինակություն ձեռք բերելու, ինքնահաստատվելու ցանկությունը,
- պարտքի և պատասխանատվության զգացումը և այլն

Բացասական դրդապատճառներից են՝

- սովորել չցանկանալը (ծուլությունը),
- անկարգապահությունը (անկազմակերպվածությունը),
- սովորել չկարողանալը (ընդունակությունների պակասը),
- ուսման մեջ հետ մնալը,
- տարեկիցների, ընտանիքի բացասական ազդեցությունը,
- ընտանեկան անբարենպաստ միջավայրը,
- սոցիալական անբարենպաստ հարաբերությունները և այլն:

Ուսումնական գործունեության արդյունավետությունը, բնականաբար, մեծապես պայմանավորված է դրական դրդապատճառների առկայությամբ: Ենթադրվում է, որ ուսումնական արդյունավետ գործունեության ծավալման համար պետք խթանել սովորողների ուսումնական դրական դրդապատճառները:

Սակայն երբեմն դրական թվացյալ մոտիվացիաները կարող են կասեցվել կամ փոխվել բացասականի,օրինակ ավագ դպրոցում տղաների շրջանում սովորելու ձգտումը հաճախ մարում է շրջապատի պատճառով:

Նշանակում է ,որպեսզի ուսումնական մոտիվացիաները դրական լինեն և կայուն,անհրաժեշտ է դրանք ոչ միայն ձևավորել, այլև ծավալել դրանք ամրապնդելու գործողություններ: Նախ և առաջ անհրաժեշտ է հմուտ կերպով խթանելաշակերտների ուսումնական գործունեությունը՝ առաջին հերթին հենվելով նրանց ցանկությունների վրա՝փորձելով հասկանալ

ցանկությունները, խոսելով նրանց հետաքրքրող թեմաների մասին, ընդունելով անհաջողությունները և այլն:

Ուսումնական դրդապատճառներից առավել կարևորն ու հիմնականը ուսումնառության հանդեպ սովորողների հետաքրքրությունն է՝հատկապես

ճանաչողական հետաքրքրությունը:Այն դրսևորվում է ուսումնական նյութի հանդեպ աշակերտի հուզական վերաբերմունքով: Ուստի այս կամ այն ուսումնական նյութն ուսումնասիրելուց առաջ ուսուցիչը պետք է նախ աշակերտի մեջ առաջացնի դրա հանդեպ կայուն հետաքրքրություն: Փորձը ցույց է տվել, որ ուսումնական գործընթացի նկատմամբ կրտսեր դպրոցականների հետաքրքրությունը պայմանավորված է երկու էական հանգամանքներով.

1. Աշակերտների ուսումնաճանաչողական հետաքրքրությունները պայմանավորված են նրանց գիտելիքների մակարդակով և որակով,այսինքն՝ որքան աշակերտը շատ գիտելիքներ ունի տվյալ առարկայից, այնքան շատ նոր գիտելիքներ է ցանկանում ձեռք բերել:

Որոշ ուսուցիչներ դասը կառուցում են հենց այսպիսի աշակերտների միջոցով,իսկ ցածր առաջադիմություն ունեցողների՝ ուսման նկատմամբ մոտիվացիան ավելի է ցածրանում:

2. Աշակերտների հետաքրքրությունները պայմանավորված են նաև ուսուցչի հանդեպ նրանց անձնային վերաբերմո

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Համագործակցային ուսուցում

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ:

Համագործակցային ուսուցման արմատները հասնում են մինչև ամերիկացի հոգեբան և մանկավարժ Ջոն Դյուիի աշխատությունները:

Ջոն Դյուին դեռևս 20-րդ դարի կեսին ձևակերպեց կրթության մի քանի սկզբունքներ,որոնք դարձան հետագա տասնամյակների մանկավարժական նորարարությունների հիմքը

Դյուիի սկզբունքներն են

ՈՒսուցումը և գիտելիքների յուրացումը պետք է իրականացվեն ակտիվ և ոչ թե պասիվ հենքի վրա

Դպրոցի ղեկավարման և նրա ամենօրյա աշխատանքներում պետք է կիրառել ժողովրդավարական սկզբունքներ

Ուսուցանման ժամանակ շեշտը պետք է դնել իրական խնդիրների վրա

Սովորողների հետազոտական ազատությունը ուսուցման մեթոդիկայի կարևոր տարր է

Կրթության նոր բովանդակության անընդհատ փնտրտուք պետք է իրականացնել

Ուսուցիչը կոչված է լինելու ստեղծագործ անհատ

Հետագա տասնամյակների ընթացքում և մինչև այսօր համագործակցային ուսուցման նորանոր մոդելներ են մշակվում,որոնց բոլորի նպատակը,կարծում եմ,կրթության որակի բարելավումն է

:

Համագործակցային ուսուցման առավելությունները

- Խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:
- Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջացելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

- Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:
- 5
- Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

- Սոցիալական հմտություններ.Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:
- Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:/Համագործակցության հինգ սկզբունքներն ըստ Ջոնսոնների /

- փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային ուսուցման տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:/Պասի Սալբերգ/

Համագործակցային ուսուցման մեթոդներ

Մեթոդ

ԻՆՉ,ԻՆՉՈՒ,ԻՆՉՊԵՍ

Ամեն օր դասարան մտնելուց առաջ յուրաքանչյուր ուսուցիչ պիտի ունենա այս երեք հարցերի պատասխանները՝ ի՞նչ սովորեցնել,ինչո՞ւ սովորեցնել,ինչպե՞ս սովորեցնել:

Առաջին երկու հարցերի պատասխանները ամրագրված են պետական առարկայական չափորոշիչներում և ծրագրերում,իսկ վերջին հարցի պատասխանը պիտի գտնի ուսուցիչը:

ՈՒսուցման մեթոդը(հունարեն metodos՝ ճանապարհ ինչ-որ տեղ,ինչ-որ բանի տանող) մանկավարժական գրականության մեջ բազմաթիվ բնութագրումներ ունի ուսուցչից դեպի աշակերտ գնացող մտքի ճանապարհ,սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպման հիմքում ընկած տրամաբանական կատեգորիա ,ուսուցչի և աշակերտի համագործակցության եղանակ և այլն:

Բնութագրումները շատ են,բայց եթե ընդհանրացնենք՝ մեթոդը **մանկավարժական գործունեության մի միջոց է,հնար,որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին:**

Համագործակցային ուսուցման մեթոդներն են

- **Աշակերտների թիմային առաջադիմություն**
- **Խճանկար**
- **Շրջագայություն պատկերասրահում**
- **Երեք բանալի և մեկ կողպեք**
- **Հինգրոպեանոց ազատ շարադրանք:**

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ:

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

Խճանկար (Ջիգսո, Jigsaw): Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում

Շրջագայություն պատկերասրահում: Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք

Հետազոտության խնդիրները

- ուսումնասիրել հիմնախնդրի վերաբերյալ գիտամանկավարժական գրականությունը
- ուսումնասիրել դրդապատճառ/մոտիվացիա հասկացությունը
- առանձնացնել,կիրառել,ներկայացնել սովորելու մոտիվացիան խթանող մեթոդները և մեթոդական հնարները

Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները

Դասարանում նկատած հիմնախնդրի վերաբերյալ ուսումնասիրել եմ մասնագիտական գրականություն,խնդրի լուծման ուղիներ փնտրել:.Պլանավորել
և անցկացրել եմ փորձարարական 2 դաս համագործակցային մեթոդներով/խմբային աշխատանք,շրջագայություն պատկերասրահում/,

յուրաքանչյուր դասից հետո լրացրել ինքնանդրադարձի թերթիկ, դասերից առաջ և հետո անցկացրել եմ հայտորոշիչ հարցում:.

Աշխատանքի կառուցվածքը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից,գրական ակնարկից, փորձարարական մասից,վերլուծությունից,եզրակացությունից,հավելվածից

Փորձարարական հետազոտություն

3. 1 **ԽՄԲԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ:**Աշխատանքն անցկացրել ենք Գեղարքունիքի մարզի Մադինա գուղի միջնակարգ դպրոցի 2-րդ դասարանում:Դասարանում սովորում են10 աշակերտ,2 տղա և 8 աղջիկ:Ես և շրջակա աշխարհը առարկան այդ դասարանում դասավանդում եմ շաբաթական 1 ժամով,դասացուցակով այն բաշխված է երկուշաբթի օրերին՝ 5-րդ ժամին:Դասարանում սովորում են տարբեր ընդունակությունների տեր աշակերտներ:Քանի որ դասարանում աշակերտների թիվը քիչ է,հետազոտական աշխատանքի մեջ ներգրավվել են բոլորն:Հետազոտական աշխատանքը կատարվել է տարեվերջին,որպեսզի 2-րդ դասարանցիները արդեն ինտեգրվեն ուսումնական գործընթացին՝ հաշվի առնելով նաևնախորդ տարիների կորոնավիրուսային իրավիճակը:
Ավարտական աշխատանքի հետազոտությունն սկսելուց առաջ սովորողների՝ դպրոց գալու,սովորելու մոտիվացիան կարելի է ստուգել հայտորոշիչ թեստով:
Հետաքրքիր է,որ հայտորոշիչ թեստը լրացնելուց հետո հետևյալ պատկերը ստացվեց՝
Ցածր ուսումնական մոտիվացիա ունեցող աշակերտների պատասխանները շատ նման էին իրար,նրանք բոլորը նշել էին,որ հաճույքով էին գալիս դասի 1-ին դասարանում,քանի որ հեշտ էր:
Թիրախային խմբում գտնվող սովորողները վերջին հարցի պատասխանը կապել էին բիզնեսի հետ:

Միջին և բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները «Ես դպրոց չեմ գալիս,որովհետև ...» հարցին պատասխանել էին/4 աշակերտ/«որովհետև հիվանդ եմ,ջերմություն ունեմ»:

Փորձարարական դաս-1

Այսօրվա դասի թեման էր<<Եղիր բնության բարեկամը>>:
Փորձարարկան առաջին դասը սկսվեց հին դասի հարցումով,այնուհետև մտագրոհի միջոցով փորձեցինք ի մի բերել սովորողների ունեցած գիտելիքները,կապ ստեղծել հին ու նոր դասերի միջև:Քանի որ հետազոտության նպատակը համագործակցային ուսուցման

արդյունավետության պարզումն էր,ուստի դասը շարունակվեց այդ մեթոդներով(տես հավելված 2.1,3.1):
Իմաստի ընկալման փուլում դասարանը բաժանվեց 3 խմբի,որոնցից յուրաքանչյուրում ընդգրկվեց հետազոտության թիիրախում գտնվող երեխա:

Խմբերից յուրաքանչյուրը ստացավ առաջադրանք՝նկարել որևէ բնապահպանական նշան, առաջադրանքի կատարման համար տրվեց 5-7 րոպե ժամանակ:Այնուհետև խմբերը ներկայացրեցին իրենց աշխատանքները:
Կշռադատման փուլում<< պատմությունների ու հեքիաթների զամբյուղ>>հնարով կատարվեց ամփոփում:
Արդեն ձևավորված խմբերին տրվեց տնային առաջադրանք:

Փորձարարական դաս-2

Այսօրվա դասի թեման էրՊահպանության կարիք ունեցող բույսեր և կենդանիներ:Կարմիր գիրք>>:աշակերտները սկզբում նստած են նախորդ դասին
ձևավորված խմբերով,իրենց աշատանքները փակցված են դասասենյակի պատերին:
Խթանման փուլում պրիզմա կազմվեց <<բնություն>>բառով:
Իմաստի ընկալման փուլում աշակերտները լրացրեցին ԳՈՒՍ աղյուսակի առաջին երկու վանդակները:Այնուհետև խմբերի ներսում սովորողները հաշվեցին
մեկից երեք և ըստ այդմ կազմեցին նոր խմբեր:Նոր ձևավորված խմբերը հերթով մոտենում են պատկերասրահի նմուշներին և խմբի այն անդամը, որը մասնակցել է այդ աշխատանքի ստեղծմանը,ներկայացնում է այն:Այդպես մինչև բոլոր խմբերը մոտենում են բոլոր աշխատանքներին:Այնուհետև սովորողները վերադառնում են իրենց տեղերը և լրացնում Գ վանդակը:Քննարկվում են մի քանի աշակերտի լրացրած թեթիկները<հիմնականում թիրախային խմբում գտնվող>:
Կշռադատումը կատարվում է <<խորանարդում>>մեթոդով:
Այնուհետև կատարվում է դասի ամփոփում,ակտիվ աշակերտների խրախուսում,տնային աշխատանքի հանձնարարում:

Վերլուծություն-անդրադարձ

Անդրադարձ կատարելով ավարտական աշխատանքիս՝ պետք է ասել,որյուրաքանչյուր երեխայի մեջ թաքնված ընդունակություններ կան,որոնք ուսուցչի դասավանդման ճիշտ մեթոդի շնորհիվ կարող են բացահայտվել:

Ըստ իս՝ շուրջ մեկ տարի տևած հեռավար կամ շփման սահմանափակումներով ուսուցման ընթացքում որոշ սովորողների մոտ նաև հոգեբանական խնդիր է ուսման նկատմամբ ցածր մոտիվացիան, քանի որ երեխաների կյանքում <<չիկարելիների>> շարքն ավելացել է:

Անկասկած ուսուցման ժամանակակից մեթոդները շատ արդյունավետ են,սակայն աշխատանքիս թիրախային խմբում ներառված երեխաների՝ ուսման նկատմամբ մոտիվացիայի բարձրացման վրա ազդեցությունն զգալի չէր:

Աշխատանքի ընթացքում համագործակցային մեթոդներով անցկացրած դասը թույլ տվեց երեխաներին հասկանալու,որ իրենք կարող են վճռորոշ դեր ունենալ ուսման գործընթացում,իրենցից է կախված խմբի առաջադիմությունը,ամեն նոր գիտելիքով կարող են մեկ աստիճան վեր բարձրանալ և այլն:

Աշխատանքիս գիտական հավաստիությունը չի կարող շատ բարձր լինել,քանի որ կատարված է կարճ ժամանակահատվածում:

Մտադիր եմ հետազոտության փորձարարական մասը շարունակել՝ներառելով այլ դասարանների՝ուսման նկատմամբ ցածր մոտիվացիա ունեցող սովորողների,որպեսզի ինքս ինձ համար հաստատեմ/ կամ ժխտեմ/ վերոբերյալ փորձարարության հավաստիությունը

Եզրակացություն

Կատարված փորձարարական հետազոտական աշխատանքի միջոցով հանգեցինք այն եզրակացության,որ համագործակցային ուսուցման մեթոդների արդյունավետ կիրառումը կարող է բոլոր աշակերտներին հավասարապես մասնակից դարձնել դասին և խթանել սովորողի կարողությունների և հմտությունների հետագա զարգացումը,մոտիվացիան դեպի ուսումը:

Ի վերջո հասանք մեր առջև դրված նպատակին.այն է սովորողների՝ուսման նկատմամբ մոտիվացիայի խթանում : Որպես վերջաբան նշեմ,որ ցանկացած մեթոդի կիրառում պետք է զուգակցվի ուսուցչի ուղղորդող և գրագետ խոսքով:

Օգտագործված գրականության ցանկ

Յու. Ամիրջանյան,Ա Սահակյան Մանկավարժություն ,«Մանկավարժ»,Երևան 2005
Ա. Է. Ափոյան Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում/Դասավանդման մեթոդիկա 2014
«Դպիր» մանկավարժական հանդես, Ջոն Դյուի«Դպրոցը և հասարակությունը»
Ս. Խաչատրյան ՈՒսուցման արդյունավետ միջոցներ,Երևան 2020 Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ
Ա.Հովհաննիսյան և այլք ,Համագործակցային ուսուցում,Երևան 2006
Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար Երևան 2004
Նախաշավիղ 2003/1 Երևան 2003,Տիգրան Մեծ հրատ.

ՀԱՎԵԼՎԱԾ

1.1Հայտորոշիչ թեստ 1 /10րոպե/

Աշակերտի անուն,ազգանուն——————————————————

1.Հաճույքով եմ գալիս դպրոց

այո ոչ

2.Ամբողջացրու նախադասությունը

Ես դպրոց գալիս եմ,որովհետև——————————————————————

Ես դպրոց չեմ
գալիս,որովհետև——————————————————————

3.Հիշիր,թե ո՞րերորդ դասարանում էիր ավելի հաճույքով գալիս դասի,1-ին,թե 2-րդ
Պատասխան——————,ինչո՞ւ——————————————————————

4.Ես դպրոց գալիս եմ,որ
ա/ նոր գիտելիք ստանամ գ/ընկերներիս հետ խաղամ
բ/ծնողներն են ստիպում դ/տանը չմնամ
ե/այդպես է պետք

5.Եթե քեզ թույլ տային չսովորել,ինչո՞վ կզբաղվեիր

1.2Հայտորոշիչ թեստ 2 /10որոպե

Աշակերտի անուն,ազգանուն——————————————————

1.Հաճույքով եմ գալիս դպրոց
ա)այո բ) ոչ

2.Ամբողջացրու նախադասությունը

Ես ուզում եմ դպրոց գալ,,որովհետև——————————————————————

Ես չեմ ուզում դպրոց գալ,որովհետև——————————————————

3.Հիշիր,թե ո՞րերորդ դասարանում էիր ավելի հաճույքով գալիս դասի,1-ին,2-րդ,թե 4-րդ

Պատասխան——————,ինչո՞ւ——————————————————————

4.Ես դպրոց գալիս եմ,որ

ա/ նոր գիտելիք ստանամ գ/ընկերներիս հետ խաղամ

բ/ծնողներն են ստիպում դ/տանը չմնամ ե/այդպես է պետք

5.Եթե քեզ թույլ տային ընդհանրապես դպրոց չգալ,ի՞նչ կանեիր

ա/ուրախությունից կգոռայի գ/չգիտեմ

բ/կլացեի դ/կգնայի դասղեկի տուն բողոքելու

ե/տանը ինքնուրույն կսովորեի

---

2. 1Համագործակցային դասի պլան 1

Առարկա՝ Ես և շրջակա աշխարհը

Թեմա՝ Եղիր բնության բարեկամը

Դասարանը՝2-րդ

Տևողությունը 45 րոպե

Դասի նպատակը՝

- Իմանալ բնության մեջ պահելու վարքի կանոնները

- Իմանալ իրենց շրջապատում աճող պահպանության կարիք ունեցող որոշ բույսեր և կենդաններ
- Աշակերտների մոտ ձևավորել առաջադրանքը համագործակցելով կատարելու հմտություններ:
- Ցույց տալ խմբային աշխատանքի հնարավորությունները

Վերջնարդյունքները՝

- Կարողանա ինքնուրույն պատրաստել և ճանաչել բնության պահպանության որոշ կանոններ և նշաններ
- Հասկանա բնապահպանական խնդիրների կարևորությունը

- Օգտվել հանրագիտարաններից,տեղեկատվական այլ աղբյուրներից
- համագործակցել խմբում
- հասկանալ և գնահատել ընկերոջ աշխատանքը

Օգտագործվող նյութեր՝դասագիրք,տետր,գրատախտակ,կավիճ,
Կիրառվող մեթոդներ՝մտքերի տարափ,կարճ դասախոսություն,խմբային աշխատանք,քննարկում

1-ին դասաժամ/համակցված դաս
Կազմապերպչական մաս,հին դասի հարցում,գնահատում,ամփոփում
Կապ ստեղծել հին և նոր դասերի մեջ:Խթանում՝մտագրոհ
ՈՒսուցիչը հարց է ուղղում սովորողներին՝ի՞նչ գիտեն բնության մասին և մարդիկ ինչպես են օգտվում բնությունից:
Աշակերտները պատասխանում են հարցերին՝հիշելով անցած դասերը:

Իմաստի ընկալում:Ուսուցիչը բացատրում է դասը,ապա առաջարկում աշակերտներին վերհիշել նախորդ դասերին իրենց անցածը :
Կատարվում է խմբերի բաժանում:Ուսուցիչը դասարանը բաժանում է 3խմբի՝յուրաքանչյուր խմբում ներառելով հետազոտության թիրախում գտնվող սովորողի:
Յուրաքանչյուր խմբի տրվում է առաջադրանք՝ըստ իրենց խմբի համարի/նկարել որևէ բնապահպանական նշան/Հանձնարարության կատարման համար տրվում է 5-7 րոպե
Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը,կատարվում է,ամփոփում
Կշռադատում՝Պատմությունների և հեքիաթների զամբյուղ <<Մարդը բնության բարեկամն է և նրա մի մասնիկը>
Արդեն ձևավորված խմբերին տրվում է տնային աշխատանք՝ հանրագիտարաններից և տեղեկատվական այլ աղբյուրներից նյութեր հավաքել բնապահպանության մասին և ներկայացնել պաստառի,աղյուսակի կամ իրենց նախընտրած ձևով
1-ին խումբ----Հողի աղտոտում
2-րդ խումբ---Ջրի աղտոտում
3-րդ-----Կենդանիների և բույսերի ոչնչացում

2. 2Համագործակցային դասի պլան 2

Առարկա՝ Ես և շրջակա աշխարհը
Թեմա՝ Պահպանության կարիք ունեցող բույսեր և կենդանիներ:Կարմիր գիրք

Տևողությունը 45 րոպե
Կիրառվող մեթոդներ՝ ԳՈՒՍ աղյուսակ,շրջագայություն պատկերասրահում,խորանարդում
Օգտագործվող նյութեր՝դասագիրք,ԳՈՒՍ աղյուսակի քարտեր, երկու խորանարդ,խմբերի պատրաստած աշխատանքները
Սովորողները նստած են նախորդ ժամին ձևավորված խմբերով,իրենց աշխատանքները փակցված են դասասենյակի պատերին
Կազմակերպչական մաս
Խթանում: Պրիզմա՝ բնություն բառով
Իմաստի ընկալում:ՈՒսուցիչը խմբի յուրաքանչյուր անդամի տալիս է ԳՈՒՍ աղյուսակ և առաջարկում լրացնել Գ, ՈՒ սյունակները,ապա ներկայացնում է աշխատանքի էությունը
Խմբերի ներսում սովորողները հաշվում են մեկից երեք և ըստ թվահամարների կազմում նոր խմբեր՝1-ին համարները մի խմբում,2-րդ համարները մի խմբում և շարունակ:
Նոր ձևավորված խմբերը մոտենում են «պատկերասրահի նմուշներին»,տվյալ աշխատանքը ստեղծած խմբի անդամը ներկայացնում է իր խմբի պաստառը,պատասխանում հարցերին:
Ուսուցիչը միայն հետևում է «շրջագայությանը» և հուշումներ անում,հիշեցնում,որ պատկերասրահում խոսում են ցածր ձայնով:
Պատկերասրահում աշխատանքն ավարտվում է,երբ բոլոր խմբերը մոտենում են բոլոր աշխատանքներին
Շրջագայությունից հետո սովորողները վերադառնում են իրենց հիմնական խմբեր և ամփոփում իրենց աշխատանքը:
Ուսուցիչը հանձնարարում է լրացնել ԳՈՒՍ աղյուսակի Ս սյունակը
Քննարկում են մի քանի աշակերտի լրացրած թերթիկները/հիմնականում թիրախային խմբում գտնվող
Կշռադատում:Խորանարդում

Սեղանին դրված են երկու խորանարդ՝1-ինը տարբեր նշաններով,2-րդը խորանարդում մեթոդի կողմնորոշիչներով՝
նկարագրիր,համեմատիր,կիրառիր,վերլուծիր,զուգորդիր, ինչ՞ը կփոխեիր :
Յուրաքանչյուր խմբից երկու աշակերտ/նրանցից մեկը թիրախային խմբում ներառված աշակերտ է/ մոտենում են խորանարդներին,նետում և պատասխանում
Դասի ամփոփում,առավել ակտիվ աշակերտների խրախուսում,տնային աշխատանքի հանձնարարում
Դասի անդրադարձ

3. 1ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ուսուցիչ-Նարինե Մնացականյան

Առարկա Ես և շրջակա աշխարհը	Կիսամյակ 2-րդ	Ամսաթիվ 25/04/2022	Դասարան 2-րդ
Թեմա	Եղիր բնության բարեկամը		
Օգտագործվող նյութեր	Դասագիրք,կավիճ,գրատախտակ,տետրեր,բնապահպանական նշանների նկարներ,պաստառներ		
Դասի նպատակը	• հայրենի բնաշխարհի ճանաչում • ընտանի կենդանիների,մշակովի բույսերի և դրանց վայրի տեսակների տարբերակում • բնապահպանական խնդիրների մեկնաբանում • այդ խնդիրների լուծման ուղիների մատնանշում • բնապահպանական նշանների պանրաստում • հիմնախնդրի վերաբերյալ եզրակացությունների		

	կատարում 19		
ՈՒսուցման արդյունքներ,որոնք կփաստեն,որ ուսուցումը տեղի ունեցավ			
Վերջնարդյունքներ	Աշակերտները կկրկնեն հայրենի բնաշխարհի մասին ունեցած գիտելիքները կծանոթանան բնապահպանական հիմնախնդիրներին և դրանց լուծման ուղիներ կառաջարկեն կպատրաստեն բնապահպանական նշաններ եզրակացություններ կանեն,		
Գործողություններ Սկիզբ7-10ր	ՈՒս. գործունեություն Սովորողներ Լսում են,պատասխանում հարցերին,հիշում անցածը	ՈՒսուցիչ Մտագրոհ է անում,փորձում է հիշեցնել անցածը	Վերջնարդյունք Վերհիշում են նախորդ դասերը
Ընթացք25-30ր	բաժանվում են խմբերի և կատարում տրված առաջադրանքը(նկարել և ներկայացնել որևէ բնապահպանական նշան,ներկայացնել բնապահպանական խնդիրը)	բացատրում է,օգնում է քննարկումներին	կպատրաստեն բնապահպանական նշաններ եզրակացություններ կանեն,
Ավարտ7-10ր	Խմբերը ներկայացնում են աշխատանքները փորձում են գուշակել դասի	լսում է ուղղորդում,հանձնարարում է տնային աշխատանք	կսովորեն տվյալներ հավաքել և մշակել

	նպատակը		

3.2ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ուսուցիչ-Նարինե Մնացականյան

Առարկա Ես և շրջակա աշխարհը	Կիսամյակ 2-րդ	Ամսաթիվ 2/05/2022	Դասարան 2-րդ
Թեմա	Պահպանության կարիք ունեցող բույսեր և կենդանիներ:Կարմիր գիրք		
Օգտագործվող նյութեր	դասագիրք,ԳՈՒՍ աղյուսակի քարտեր, երկու խորանարդ,խմբերի պատրաստած աշխատանքները		
Դասի նպատակը	• հայրենի բնաշխարհի ճանաչում • բնապահպանական խնդիրների մեկնաբանում • այդ խնդիրների լուծման ուղիների մատնանշում • բնապահպանական նշանների պանրաստում • հիմնախնդրի վերաբերյալ եզրակացությունների կատարում • <<Կարմիր գիրք>>		
ՈՒսուցման արդյունքներ,որոնք կփաստեն,որ ուսուցումը տեղի ունեցավ			

Վերջնարդյունքներ	Աշակերտները կկրկնեն հայրենի բնաշխարհի մասին ունեցած գիտելիքները կծանոթանան բնապահպանական հիմնախնդիրներին և դրանց լուծման ուղիներ կառաջարկեն կպատրաստեն բնապահպանական նշաններ եզրակացություններ կանեն, կձևավորեն խմբում աշխատելու հմտություններ 21		
Գործողություններ Սկիզբ7-10ր	ՈՒս. գործունեություն Սովորողներ Լսում են,պատասխանում հարցերին,հիշում անցածը	ՈՒսուցիչ վԴասարանը նստեցնում է նախորդ խմբերով, պրիզմա մեթոդով հիշեցնում է նախորդ դասերը(բնություն բառով) ●	Վերջնարդյունք Վերհիշում են նախորդ դասերը
Ընթացք25-30ր	Խմբի յուրաքանչյուր անդամ փորձում է լրացնել ԳՈՒՍ աղյուսակի առաջն երկու վանդակը	բացատրում է,օգնում է քննարկումներին	եզրակացություններ կանեն կարմիր գրքի վերաբերյալ
Ավարտ7-10ր	Խմբերը <<շրջագայություն պատկերասրահում >>մեթոդով ներկայացնում են աշխատանքները փորձում են գուշակել դասի նպատակը	լսում է ուղղորդում,հանձնարարում է տնային աշխատանք	կսովորեն տվյալներ հավաքել և մշակել կսովորեն պատասխանատվություն կրել բոլորի արածի համար

4. 1Դասի ինքնանդրադարձի թերթիկ

Ի՞նչը լավ ստացվեց————հին և նոր դասի միջև կապը,քանի որ աշակերտները նաև չմոռացան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մասին

Ի՞նչը անակնկալի .բերեց ինձ——ամեն ինչ հարթ անցավ

Ի՞նչը պլանավորվածից չստացվեց———բնապահպանական գիտելիքները լիովին չյուրացվեցին

Ի՞նչ ստացան աշակերտները————-համագործակցելու,ընկերոջը գնահատելու կարողություն 22

4.2Դասի ինքնանդրադարձի թերթիկ

Ի՞նչը լավ ստացվեց——————թիրախային խմբում ներառված սովորողները լիովին ներառվեցին դասապրոցեսի մեջ՝իրենց խմբերում ստանձնելով նաև առաջնորդի դեր

Ի՞նչը անակնկալի բերեց ինձ——————սովորողները պլանավորածից շատ մնացին պատկերասրահում

Ի՞նչը պլանավորվածից չստացվեց————պլանավորվածը գրեթե ստացվեց,մի փոքր ժամանակը չհերիքեց

Ի՞նչ ստացան աշակերտները——————աշակերտները մեծ բավականություն ստացան շրջագայություն պատկերասրահում և խորանարդում մեթոդներից

Հասա արդյոք վերջնարդյունքին——————կարծում եմ հասա դասի վերջնարդյունքին

Ի՞նչը կփոխեի————————կշռադատման փուլում այլ մեթոդ կկիրառեի/հինգրոպեանոց շարադրանք/:.

Քանի որ համագործակցային դասի նպատակը ոչ թե աշակերտների գիտելիքների գնահատումն էր,այլ մոտիվացիայի խթանումը և համագործակցելու կարողությունների ամրապնդումը,ուստի 2 դասաժամից հետո ևս մեկ հայտորոշիչ թեստ առաջարկեցի,որը նախորդ հայտորոշիչ թեստի փոփոխված տարբերակն է